

դպրոցի մէջ սովորող աշակերտներ կային: Գերմանական մանկավարժները չէին կարող այդ չքահասկանալ, բայց նորա կամենում էին պնդել, առաջ տանել իրանց դասատուութեան մեռեալ եղանակները, իրանց և ոչ մէկին պիտանացու չոր ու ցամաք բանասիրական դասերը, իրանց վանքային անշարժ, մեռցնող կարգապահութիւնը և իրանց բթացած, անպատասխան աշակերտներին: Եւ այսպէս բժիշկների բոլոր ջանքերն անօգուտ անցան: Գերմանական մանկավարժները էյի իրանց ասածն էին պնդում և ասում. « աւելի լաւ է երեխաները մեռնեն, քան մեծանան առանց այն գիտութեանց, որոց մենք հարկաւոր ենք համարում »: Այս գաղափարական պատերազմը հասարակ բան չէր, դա մահու և կեանքի պատերազմ էր: Ահա թէ ինչպէս նա շարունակութեամբ այդպէս սաստիկ կերպով, Գերմանական մանկավարժներին յաջողեց երկար ժամանակ իրանց կողմը պահել մանուկներին անհամար անպէտք բաներ սովորցնելու իրաւունքը ի միասութեամբ թողի արած աւելի կարեւոր առարկաների: Բայց այս հանգամանքը չէր կարող մեռցնել արդէն մի անգամ զարթած գաղափարը՝ գերմանացւոց դպրոցների տիրապետող կազմութեան միասակարար պնդելութեան ծաւալման մասին մանուկների առողջութեան վերայ: Այս գաղափարը աւելի ուժեղ կերպով մշակուեց և զարգացաւ ու վերջապէս ներկայ ժամանակիս դարձաւ անսխալ աւելի ճշմարտութիւններից մինը, որի առաջ պարտական էին վերջապէս խոնարհել և ինքեանք մանկավարժները:—

(Երբեք—մէկէլ) .

Թարգ. Մ. Տէր Սարգսեանց:

(Երբեք)

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ:

« Ազգութեան երաժշտական եղանակն . . . ընդհատուցեալ զարթոցեալ զմիտս ամենեցուն առ ի տեսչութիւն շնորհին, բաժնի չիք ինչ որ զգամ մը յեղաշրջէ յորտիտ թիւին կամ ի տըրտմութիւն, սրտէս պրզոցն ժաշ, յորժամ որդէս պարտէ է՝ լիկիցի, վասն այնորիկ եւ եղեկեցական աւանդութիւնն ընկալաւ զայն »:

Ներսէս Դամբարեանցի:

Երաժշտութիւնը՝ ժարգկային զգացմունքները կրթող, քնքշացնող և ազնուացնող ամենազօրեղ տարրերից մինն է, որի կանոնաւոր ուսումը դարերի ընթացքում հետզհետէ կատարելագործուելով, գրեթէ բոլոր լուսաւորեալ ազգերի մէջ ընդհանրացել և պահանջ է դարձել, և երաժիշտ հանճարների շնորհիւ, վերջին կատարելութեան և նրբութեանն է հասել, իսկ մեղանումս իրրեւ մի նորութիւն, շատ սակաւները միայն նոր են սկսել սովորել: Երաժշտութեան ազդեցութիւնը այնքան դսւմ և բարձր է, և այն աստիճանի հզօր է, որ զգալի կերպով սաստիկ ներգործումէ ո՛չ միայն զանազան տե-

սակ բնաւորութիւն ունեցող մարդկանց սրտերի, մտքերի, հոգւոյ և զգայ-
մունքների վերայ, այլ և՛ գիշատող վայրենի գաղանների, անասունների,
թռչունների և պէս պէս կենդանիների վերայ:

Նախնի հեթանոսական դարերում, քուրմերը զանազան երգերով և բա-
ցականչութիւններով էին կատարում իրանց կրօնական ծէսերն ու արարո-
ղութիւնները, և այս կերպ ազդելով խաւարամիտ ամբոխի զգացմունքին,
ամենայն դիւրութեամբ կարողանում էին նրանց սրտի և մտքի վերայ իշ-
խել: Յունական օրէնսգիր Լիկուրգոսը իր ժամանակին սկսեց ոչնչացնել
զանազան անպիտան գոթիքների պարագմունքը իւր հայրենիքի քաղաքնե-
րում: Բացի երաժշտութեան վերարբեւալ գործիքներից, ըստ որում՝ նորա
կարծիքով երաժշտութիւնը ամենահոգր կերպով ազդումէ մարդկային սր-
տերի և զգացմունքների վերայ:

Հին առասպելապատում յոյների կարծիքով, կանոնաւոր և ներդաշնակ
երաժշտութեան և ազդու, իմաստային բանաստեղծութեան կախարդիչ ներ-
գործութիւնն ու զօրութիւնը զօրեղ կերպով ազդումէ առհասարակ մարդ-
կային սրտի և հոգւոյ վերայ, և չափազանցօրէն ասումէին, թէ՛— «Եբբ ու
բռնեմք Որդիւնք Եբբնա՛ և Նաբնա՛ Եբ ուսիշէ վերայ, ծաւերը, բեռերը՝
ծաւէ կոտորէ ջրերը, և վայրենի անանները դադարում էին շարժել և, հեցած
Որդիւնք՝ բեռնիկ Նաբնա՛ Եբնա՛ Եբնա՛ Եբնա՛: Սուրբ գրքից մեզ յայտնի է,
որ Սաւուղը երբ որ յուսահատութիւնից և հոգեկան սաստիկ ճնշող մտած-
մունքներից զառանցանաց մէջ էր ընկնում, նորա հոգեկան հիւանդութիւնը
փոքր ինչ մեղմելու համար պալատականները կանչումէին Սաղմոսերգու
Դաւիթին, որ իւր հովուական քնարի քաղցրախօս լարերի վերայ նուագէ,
որպէս զի՝ նորանով հանգստութիւն գտնէր իւրայեյնան գոռոզ թագաւորի
յուզումած սիրտը, և, Դաւիթի քնարի քաղցրիկ ձայնը անչափ հանգըս-
տութիւն և սփոփանք էր պատճառում նորա սրտին: Այդ հնաւանդ սովո-
րութիւնը մնացել մինչև այժմ նաև մի քանի հայ գիւղերի մէջ ու երբ որ
գիւղական մի մարդ կամ կին հոգեկան հիւանդութեամբ ցնորվումէ, նորանք
ո՛չ մի բժշկական միջոցի չեն դիմում, այլ՝ ուղղակի իսկոյն բերել են տա-
լիս իրենց մէջ յայտնի նուագածու գուսաններին (աշուղ) և սկսումն ամե-
նայն հոանդով նուագել տալ Ասիական զանազան սրտաշարժ եղանակներ և
պարեր, որոնցից շատերի ջղերին փրկարար ներգործութիւն է անում, որ և
բժշկվումն կատարելապէս:

Մի անգամ երևելի երաժիշտ իտալացի Ստրադելլան բնկաւ արիւնարու
աւազակների ձեռքը, որին մի քանի վայրկենից յետոյ պէտքէ գլխատէին:
Բայց յայտնի երաժիշտը գիմելով աւազակապետին, խնդրեց որ մի քանի
րոպէ ժամանակ տրուի իրեն, որպէս զի՝ մի մաղթանք երգէ առ ամենա-
րարձրեայն Աստուած, և ապա գլխատուի: Աւազակապետի համաձայնու-
թիւնն ստանալուն պէս, քաջ երաժիշտը ծունկ խոնարհած, այնպիսի հրա-
շալի մի մեղեգի երգեց, որի սրտառուչ եղանակը ազդու խօսքերի հետ
միասնա՛ ջնցեց նորանց և այնպիսի մի կախարդիչ ներգործութիւն ունեցու

աւազակապետի և նորա բոլոր ընկերակիցների ապստամբ սրտերի և մեռած զգացմունքների վերայ, որոնք միաձայն վճռեցին քաղցրախոս սոխակին կեանք և ալատութիւն շնորհել ասելով. «Սոր-բէլէտ, Աստուծոյ լէյ-տենէնտ... քննիչ, Աստուծոյ լէյտենէնտ»։ Հաստ հետու կտանէր մեզ, եթէ մի առ մի յիշելու լինինք թէ երաժշտութիւնն ի՞նչպիսի աղդեցութիւն ունի մարդոյ առհասարակ բոլոր կազմուածքի վերայ. միմիայն ուշադրութեամբ պէտքէ զննել կեանքի առօրեայ երեւոյթները. և այն ժամանակ, երաժշտութեան թովչարար ոյժն ու զօրութիւնը ակներև կլինի ամենին, և այս անժխտելի փաստերով անշուշտ կհամոզուին, որ արդարև յուզուած, յուսահատ տխուր և կեանքի դառն վշտերին և սրտամաշ հարուածներին ենթակայ սրտերը միայն այն ժամանակն են սփոփանք և թեթևութիւն զգում, երբ որ աղբու երաժշտութեան հրապուրիչ ձայնն են լսում։

Հայրենի տնակից զուրկ, ընտանեկան սիրալիր փայփայեանքին և սրտացաւ բարեկամներին կարօտ, կիզող արևի, անձրևի, ձիւնի և այլ դառն եղանակներին ենթակայ մահու չափ քաղցած, ծարաւ և բոկոտն զինւորը, երբ որ հայրենանուէր երգերի կախարդիչ ձայնն է լսում, իսկոյն նորա մարմնական ոյժերը նորոգվում են նորա յոգնած ուրբերի թլայցած ջղերը ձգվում ամրանում են, և վերին աստիճանի ոյժեղութեամբ գրեթէ արբած, ննարագէտ եւրոպացու ահեղագոյ թնդանդի սպանիչ գնդակների առաջ, անվախ, աներկիւղ, բաց ճակատով իրեն առաջ է մղում բոլոր առաջ լըշնամուն յաղթելով դափնեայ պսակ ստանալու, կամ հայրենիքի փառքի և մեծութեան համար մահառիթմ գնդակով քաջութեամբ մեռնելու նպատակաւ։ Երաժշտութիւնը հզոր կերպով ազդում է ոչ միայն հասակաւոր մարդկանց վերայ, այլ և՛ փոքրահասակ մանկիկների քնքշիկ սրտերի վերայ։ Այլ չէ տեսել մեղանից, երբ որ մանուկը Ասիական վաղիմի կոպիտ սովորութեամբ պինդ կապկապած է օրօրոցում, և երբ որ նա այդ զարհուրելի տանջանքներից ազատուելու համար ծիչ արձակելով լալիս է անդադար, մայրական ոչ մի գորովալից խօսքը և փաղաքշանքը չէ ազդում նորան, այլ՝ միայն և միմիայն նազելի մօր սրտաբուղիս Ն-նէնէ քաղցրիկ ձայնն է ազգում նորա անմեղիկ սրտին, որով նա կամաց կամաց հանգիստ քնում է։ Աննոնաւոր և մշակուած երաժշտութիւնը, կրթելով մարդոյ սիրտն ու հոգին, հետեւապէս զարթնցնում է նորա հոգւոյ մէջ ակնիւ և բարի զգացմունքներ։ Այս իսկ պատճառաւ, մեր խնկելի սուրբ հայրապետներն ու հինգերորդ ասկեղենիկ դարու հրեշտակալիօն թարգմանիչները, իրանց հեղինակած հոգեբուղիս շարականներն ու այլ հոգեւոր երգերը, սքանչելի եղանակներով էին երգում։ Աստուծոյ սուրբ տաճարի մէջ, որպէս զի՝ նոր ուխտի հաւատացեալների զգացմունքներն ու սրտերը երկնաւոր Լօր հետ ի մի կապուած լինէին։ Երաժշտութեան թովչարար ոյժն ու զօրութիւնը նոյն իսկ մեր երկրի հովիւներից շատերին գործնական փորձերից յայտնի է, վասն զի երբ որ ոչխարների ամբողջ հօտին կամենւում են քուր տալ, կամ մի բլարից փոխադրել մի ուրիշ խոտաւէտ յարմարաւոր տեղ, սրնգահար հո-

վին սկսումէ սուր ձայնով սուլել « Է-Է-Է-Է-Է » և « Է-Է-Է-Է-Է » ա-
սուած սրտաշարժ եղանակը հովուական սրնգի վերայ, և հօտի առաջն ըն-
կած նշանակեալ տեղն է առաջնորդում, իսկ ցրուած հօտը մի քանի րո-
պէի մէջ ի մի ժողովուած, զարմանալի կարգապահ հովեամբ իրանց սրնգա-
հար հովուին են հետեւում:

Ղազարոս քահանայ Յովսէփեան:

Թ. Բ. Բ. Բ.

ԱԶԳԱՅԻՆ.

ՏԵՂԵԿԱԿԻՐ ԴՊՐՈՅԻՆ ԵՐԵՒԱՆԱՅ.

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԼՐՈՆԱՅԷ.

Դպրոցիս վարչութիւնը 2եղ քաղաքիս բոլոր Հայ հասարակութեան
ներկայացուցիչ ճանաչելով, իւր բարոյական պարտքը համարեց ներկայացնել
2երդ յարգութեանց ո՛չ միայն դպրանոցիս եռամեայ նիւթական դրութիւնը,
այլ և նորա ուսումնական դրութեան եռամեայ համառօտագոյն հաշիւը և
այս վերջինը ինձ յանձնեց մատուցանել 2եղ. Այստեղ խոստովանումք,
որ չեմ կարող նոյն իսկ այս երեք տարուայ դպրոցական պարագաները,
որոնք ունեցել են մեծ աղիւցեցութիւն նորա ուսումնական մասի ընթացման
և զարգացման վերայ, մանրագնին բացատրութիւններով դնել 2եր առաջ.
Ես միայն կաշիատեմ շատ համառօտ կերպիւ յիշեցնել 2եղ այն գլխաւոր
կէտերը, որոնք ներկայ Հոգարարձութեան օրօք տեղի են ունեցած, մանրա-
մասնութիւնները թողնելով մի այլ յարմարուոր ժամանակի:

1883 ամի Յունիսին, ստացաւ ներկայ Հոգարարձութիւնը նախօրդ Հոգա-
րարձութիւնից Դպրոցս եօթ դասարանով, որոց չորսը նախակրթարան և
երեքը՝ հիմնական կամ իսկական դպրանոցական դասարաններ էին. Այդ
եօթ դասարաններում կար, այն ժամանակ 193 աշակերտ՝ որոնց 166 ը
թողակաւ որ, 27 - ը՝ ձրիաւարժ. Աշակերտներից ամենափոքրն էր 7 տարե-
կան, ամենամեծը 14—15 ամեայ, ինչպէս և այժմ. Ծխականներում կամ
նախակրթարաններում այն ժամանակ. ինչպէս և նորանից առաջ և յետոյ
մինչև ցայսօր. աւանդութիւն և աւանդութեան այժմ ևս չարածական
24 ական դասեր, իւրաքանչիւրը մի ժամ՝ գարնան և աշնան օրերում, իսկ
ձմրան՝ 50 ական րոպէի տեւողութեամբ, հիմնական դասարաններում ժա-
մանակի նոյն տեւողութեամբ՝ բայց 30 ական դասեր էին տրվում, այժմ
32 ական են. Նախակրթարաններում աւանդութեւր. — կրօն (իրրե բարոյա-
խօսութիւն), Հայոց և Ռուսաց լեզու, իրենց վայելչագրութիւններով.
Թուարանութիւն, գծադրութիւն, իրազննութիւն, երգ և երգեմն մարմնա-